

ՍԱԱԴԻ ԳԻՒԼԻՍՏԱՆԻՑ

«Ի՞նչ օգուտ քեզ էդ վարդի անօթից,
Ե՛կ, տար մի թերթիկ ի՛մ վարդանոցից,
Է՛դ վարդերի կեանքն հինգ օր է կամ վեց.
Ի՛մ վարդենիքն են միշտ թարմ ու անեղծ:
ՍԱԱԴԻ.

Պատմում են, որ մի թագաւոր հրամայեց սպանել իր ստրուկ-
ներից մէկին: Խեղճ ստրուկն յուսահատութիւնից իրան կորց-
րեց. էլ ինչ լուտանք ու հայհոյանք որ ասես սեղաց թագա-
ւորի երեսին:

Իմաստնոց ասած է. Ովքեր հոգուց ձեռ յուանան, ինչ
որ սրտում կայ, դուրս կը տան:

Երբ բռնութիւնից խոյս տալ չի լինում,
Ձեռք սուսերի զլխին է դիմում,
Հալածուող կատուն շնից չի վախիլ,
Յուսահատ մարդը խօսքը չի գաղիլ:

Թագաւորն հարցրեց, թէ ինչ է ասում. ներկաներից մի
բարի վէզիր պատասխանեց, թէ ազօթում է Ձեզ համար, Տէր
արքայ: Թագաւորի գութն եկաւ ու ստրկի արիւնից ձեռ վերց-
րեց: Մի ուրիշ վէզիր, որ ընդհակառակը շատ չար էր, ասաց.
ամօթ չէ՞ որ սուտ ես խօսում թագաւորի առաջ. այս անա-
մօթն հայհոյեց, անպատուեց թագաւորին. կարելի՞ բան էր:
Թագաւորը դէմքը խոժոռելով դարձաւ դրան ու ասաց. նրա
սուտը քո ճշմարտից լաւ էր ինձ համար, որովհետեւ նա իր սու-
տով մի բարիք գործեց, իսկ դու. քո ճշմարտով մի չարիք:

Խելացու ասած է, լաւ է սոռան հաշտարար քան մըշ-
մարիտն խոռվարար:

Ինչ որ ասես, թաղաւորն այն էլ կ'անէ.
Բայց տեսնես մէկ ասածդ արդեօք լաւ բան է:

Փրիդուն թաղաւորի պալատան ճակտին գրուած էր.
«Աշխարհա, եղբայր, ոչ ոքի չի մնայ,
Դիր լոյսդ աշխարհի արարչի վրայ.
Մի՛ ապաստանիր վաղանցուկ փառքին,
Քեզ նման շատեր եկան զնացին,
Իսկ հոգիդ անբիծ երբ մի օր մեկնի,
Նոյնն է գահի վրայ մեռնիս թէ գետնի»):

Խորասանի թաղաւորներից մին երազում տեսաւ մի ան-
գամ Սուլթան Մահմուդ Սաբուքտէքինին, որի մահից անցել
էր հարիւր տարի. մարմինն ամբողջ քայքայուել, հող էր դառել
բացի աչքի բիբերից, որ խաղում էին կապիճներում և դէս ու
դէն նայում: Ոչ մի գիտնական չկարողացաւ մեկնել բացի մի
գերվիշից, որ տուաւ իսկական մեկնութիւնն՝ ասելով.

Դեռ մինչև օրս էլ միակ ցաւն է՛ն է,
Որ տեսնէ գահը արդեօք ո՛ւմ ծեռն է:

Շատ մեծ մարդկերանց երկրի ծոց գրին,
Երկրի երեսին փառքի հետք չմնաց.
Անշունչ դիակներ լանժնեցին հողին,
Հողն այնպէս կերաւ, որ ոսկը էլ չմնաց.
Շատեր անցկացան, մնաց Նուշիրվան,
Այդ վեհ անուէն էլ գործով ողջ մնաց.
Դէհ, գործիր, ընկեր, օգտուիր կեանքից,
Քանի չեն ասել «այսինչն էլ չմնաց»:

Ասում են՝ կար մի արքայորդի՝ կարճահասակ և տգեղ,
մինչ եղբայրները բարձրահասակ էին ու գեղեցիկ:—Հայրը զը-
գուանքով ու արհամարհանքով էր նայում նրան. տղան կռահեց
ու ասաց. է՛, հա՛յր իմ, լա՛ւ է խելացի ցածր քան անխելք
բարձրը. հասակ մի՛ պտուիր, արժանիք խնդրիր. «Գառն՝ փօքը
այլ սուրբ, փիղն պիղծ անսուրբ»:

Լեռոնն Սինա թէպէտ ցածուն, աննշան,
Անդ սակայն Տէր հաղմեաց իւրեան իշւան:

Ձեռ լսել, որ մի նիհար զիտնական
Ասել է մի օր մի գէր ագէտի.
Նիհար որ լինի ձին արարական,
Մի ախոռ էշից կ'արժէ աւելի:

Հայրը ծիծաղեցաւ, նախորարներն հաւան կեցան, իսկ եղ-
բայրները սաստիկ զայրացան:

Մինչև որ մարդս բաց չանէ բերան,
Թերութիւն թէ ծիրք չեն գալ երևան.
Դու ամեն անուսու մի՛ կարծիք պարապ,
Գուցէ թէ նիրհած վագրեր այնտեղ կան:

Այդ օրերում մի դաժան թշնամի կռուի դուրս եկաւ
Թադաւորի դէմ. երկուստեք բանակներ կանգնեցան ճակատ
ճակտի: Առաջին ծիաւորը որ ասպարէզ մտաւ, մեր թղուկն
էր և ասաց.

Ես մարտի դաշտից խոյս տուողը չեմ,
Արիւնի տեսքից սոսկացողը չեմ.
Ո՛վ կ'ասէ քաջ եմ, դայ արիւն թափի,
Ո՛չ թէ ուրիշի արիւնով պարծի:

Ասաց ու յարձակեցաւ թշնամու բանակի վրայ, շատ կրտ-
րիճների գետին տապալեց, ապա վերադարձաւ հօր մօտ և
զահոյքն համբուրելով ասաց.

Ասացիր թղուկ, հաւան չկեցար,
Հաւան կեցածիցդ ի՞նչ շնորհ տեսար.
Կռուի մէջ նիհար ձին է պէտք դալի,
Ո՛չ թէ գերացած եզր եղալի:

Ասում են՝ թշնամու զօրքը շատ շատ էր, իսկ սրանցը՝
քիչ. վաշտերից մին վախից խոյս էր տալիս. թղուկը ծայն բարձ-
րացրեց ու ասաց. Ձե՛զ տեսնեմ, տղայք, տղամա՛րդ Քնաք,
կնիկ չդառնաք: Այս ասելով հեծելազօրի նախանձը գրգռեց. ա-
ռաջին իսկ յարձակումով յանկարծակիի բերին թշնամուն և,

ասում են, հենց նոյն օրն էլ լաղթանակ տարան: Թագաւորն համբուրեց որդու գլուխն ու աչերը, ողջագութեց նրան և այնքան սիրեց, որ մինչև անգամ դահին ժառանգորդ կարգեց նրան:

Մի անգամ եղբայրները չարախնդութիւնից կերակրի մէջ թոյն խառնեցին. քոյրը վերնատնից տեսաւ և վանդակը ծծելով զգուշացրեց. երիտասարդը բնագոյով հասկացաւ ու ծեռք կերակրից ետ քաշեց ասելով.

Օ՛, սրա՛նց տեսէք. խելօքը մեռնի,
Սրանց պէս զիժը գայ տեղը բռնի:

Էն ո՞ր զիժն է, որ գայ բուռի շուաքի տակ,
Թէկուղ, ասեն, թողեց փիւնիկն էս աշխարհը:

Հայրը տեղեկացաւ եղածին, եղբայրներին փանչեց մօտը և ականջները մի լաւ ոլորեց, յետոյ ամեն մէկին մի քաղաք տուաւ որ զնան ու առանձին ապրեն, որով և ամեն վէճ ու խռովութիւն վերջացաւ: Ի զուր չեն ասել.

Տասը դէրվիշ կը պսուկին մի գորգի վրայ,
Երկու պետի մի ողջ երկիր նեղ կը գայ:

Աստուծոյ մարդն երբ ուտէ կէս նկանտկ,
Միւս կէսը աղքատներին կը բաշխէ.

Թագաւորն երբ գրաւում է մի աշխարհը,
Մտքումն ունի, որ դեռ մէկն էլ գրաւէ:

Էղէմիշ Թագաւորի պալատի դրանը տեսա՛յ մի իշխանագլուն պատանի, որի խելքն ու հասկացողութիւնը լեզուով պատմել չէր լինիլ. ինքը փոքր բայց խոստացած մեծութեան նշաններն երևում էին ճակտին:

Փայլում էր գլխին, փայլում էր պայծառ,
Մեծութեան աստղը՝ խելքի յայտարար:

Ջերկարեմ, Թագաւորն էլ էր շատ հաւանել, որովհետեւ սիրուն տեսք, հանճարեղ գլուխ... իմաստնոց ասած է.

Յօրըդ թողածից քեզ օգուտ չկայ.

Ունի՞ս խելք, հանճար—էդ քեզ պէտք կը գայ:

Ընկերներն սխաճն նախանձել, չարախնդութեամբ զրպարտում էին նրան և աշխատում սպանել, բայց ի զուր:

Բարեկամդ երբ բարեկամ է,
Թշնամու աչքը դուրս դայ.
Սիրեցեալը ինչ որ անէ,
Սիրողը սրտին է՛ն դուր կը դայ:

Թագաւորն հարցրեց. ի՞նչ ես արել սրանց, որ այսպէս թշնամացել են հետդ: Պատասխանեց. Տէր Արքայ, Ձեր բարձր հովանաւ շնորհիւ բոլորին եմ դո՛ւ թողել բացի նախանձից. նախանձի ուղածն էլ այն է, որ Ձեր Վեհափառութեան—Աստուած միշտ փառաց պահէ, շնորհներից զուրկ՝ դառնամ տնանկ ու կարօտ:

Ես կարող եմ չտանչել սիրտը մարդկանց,
Բայց ի՞նչ արած. կայ ինքնատանջ և նախանձ.
Մեռի՛ր, նախանձ, որ էդ ցաւիցդ ազատուիս,—
Էդ մի ցաւ է, որից մահով կ'ազատուիս:

Ապերչանիկն ուղում է միշտ երջանկին
Տեսնել կարօտ օրուայ հացի փշրանքին.
Չղջիկը որ լոյս տեսնելու է անդօր,
Արեգակի աչքն ինչո՞վ է մեղաւոր:
Լա՛ւ է այդպէս հազար աչքը կուրանան,
Քան արեւի պայծառ լոյսը ուրանան:

Պարսկ. Թարգմ.

Մ. Վ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆՅ